ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 639-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ ՇԴ1/0006/01/21 ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎՃՌԻ ՀԻՄՔՈՎ, ՎԱՐԴԻԹԵՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՅՈՒՐԱՑՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ 590 000 ԴՐԱՄ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/0006/01/21 քրեական գործի դատավճիռը, նաև հաշվի առնելով Շահանդուխտ Սարգսյանի դիմումը որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/0006/01/21 քրեական գործի դատավճռի հիմքով, Ախուրիկ համայնքի նախկին ղեկավար Վարդիթեր Գասպարյանի կողմից պարգևավճարի յուրացված, վերականգնված և Ախուրյան համայնքի հաշվեհամարին փոխանցված գումարից 590 000 դրամ ժամանակին չվճարված պարգևավճարի գումարը հատկացնել Շահանդուխտ Սարգսյանին:

2. Հանձնարարել համայնքի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ Շահանդուխտ Սարգսյանին վճարել ժամանակին չվճարված պարգևավճարի գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի N 640-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-027-0005-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՆՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն ՀՀ Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի տարածքում գտնվող 08-027-0005-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող գույքի բաժանումից առաջացող հատվածները հասցեավորել հետևյալ կերպ՝
   1) Բաժանման սխեմայի թիվ 1 հատվածին տրամադրել՝ «ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Բենիամին, 17-րդ փողոց, 14/3 բնակելի տուն»,
   2) Բաժանման սխեմայի թիվ 2 հատվածի հասցեն թողնել նույնը՝ «ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Բենիամին, 17-րդ փողոց, 14 բնակելի տուն» հասցեն:
2. Գույքի բաժանման սխեման կցվում է սույն որոշմանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի N 641-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 582-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետերի, դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 31 փողոց 19 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 582-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ
«1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 31-րդ փողոց, 19 հասցեի բնակելի նշանակության շենքերի և շինությունների նշանակությունը փոխել հասարակական նպատակային նշանակության, խանութ գործառնական նշանակություն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի N 642-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 49 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 17-ի թիվ 5 որոշումը, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի 1 փողոց թիվ 70 հասցեի հողամասը դրա վրա առկա շինության սեփականատիրոջը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» թիվ 49 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Որոշման՝

1) 1-ին կետում «0,085819» թվերը փոխարինել «0,084681» թվերով,

2) 2-րդ կետի «858,19» թվերը փոխարինել «846,81» թվերով, «453125 (չորս հարյուր հիսուներեք հազար հարյուր քսանհինգ)» բառերը և թվերը փոխարինել «447116 (չորս հարյուր քառասունյոթ հազար մեկ հարյուր տասնվեց)» բառով և թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«17» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ախուրյան, Գյումրիի խճ. 42, Հեռ. (0312) 70885 , 091 420 451, akhuryan.shirak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ N 643 -Ա
19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 2, ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԳՈՒՐԳԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 178 - Ա որոշումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, շենք ¼, թիվ 23 բնակարանը՝ 50.97 քառակուսի մետր մակերեսով ընդհանուր օգտագործման տարածքների և հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրել Գուրգեն Ռազմիկի Պետրոսյանի ընտանիքի յոթ անդամներին.

ինքը՝ Պետրոսյան Գուրգեն Ռազմիկի, ծնված՝ 29.11.1961թ.

կինը՝ Պետրոսյան Մարիամ Վոլոդյայի, ծնված՝ 18.06.1963թ.

տղան՝ Պետրոսյան Արտեմ Գուրգենի, ծնված՝ 09.08.1983թ.

տղան՝ Պետրոսյան Արմեն Գուրգենի, ծնված՝ 09.07.1983թ.

հարսը՝ Պետրոսյան Աուրելիա Կոնստանտինի, ծնված՝ 08.08.1968թ.

եղբոր տղան՝ Պետրոսյան Արթուր Գագիկի, ծնված՝15.03.1990թ.
եղբոր աղջիկը՝ Պետրոսյան Անի Գագիկի, ծնված՝12.07.1991թ.

2.Հանձնարել.

ա) Ախուրյանի համայնքապետարանի ֆինանսական բաժին, նվիրատվությունից հետո նշված բնակարանը դուրս գրել հաշվեկշռից:

բ) սեփականատիրոջը՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանում գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 644-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՋՈՒՌԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 168 որոշումը, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը անհատույց, անժամկետ օգտագործման հանձնել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը/անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 16032020-08-0052, տրված 2020 թվականի մարտի 16-ին, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ջաջուռ, 3-րդ փողոց, 21 բնակելի տուն/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«20» հոկտեմբեր 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 645-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՔԵԹԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 169 որոշումը, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Քեթիի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը անհատույց, անժամկետ օգտագործման հանձնել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 26032020-08-0011, տրված 2020 թվականի մարտի 26-ին, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Քեթի, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 7 մանկապարտեզ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«20» հոկտեմբեր 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2022 թվականի N 646-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0627-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության, 08-007-0627-0004 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացվող 182,17 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«20» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2022 թվականի N 647-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0627-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՕԲՅԵԿՏԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն ՀՀ Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի 08-007-0627-0004 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած 182,17 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակություն փոխադրվող հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 21/1 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«20» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2022 թվականի N 648-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՄԻԿ ԿԱՐՈՅԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ »-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 15-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները,Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշումը և հիմք ընդունելով Արմիկ Կարոյի Հունանյանի դիմումը որոշում եմ՝

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր «Արմիկ Կարոյի Հունանյան» ին (ՀՎՀՀ՝ 57277078) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան 24. քմ հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք իրականացնելու ժամկետ սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«21» հոկտեմբեր 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«21» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 649-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԲԱՆԱՎԱՆ,3 ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 1/3, ԹԻՎ 9 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԼԵՆԱ ՆԱՄԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 26-ի թիվ 16 որոշումը.

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող Ախուրյան բնակավայրի Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, շենք 1/3 թիվ 9 բնակարանը՝ 66.27 / վաթսունվեց ամբողջ քսանյոթ հարյուրերորդական/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով՝ ընդհանուր բաժնային իրավունքով, հավասար բաժիններով, նույն շենքի գույքի և հողամասի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում համապատասխան բաժնեմասի հետ, նվիրատվության կարգով նվիրել Լենա Նամեսի Ավետիսյանի յոթ անձից բաղկացած ընտանիքի հետևյալ անդամներին:

ինքը՝ Ավետիսյան Լենա Նամեսի, ծնված՝ 03.07.1951թ.
տղան՝ Պապիկյան Գուրգեն Լյուդվիկի, ծնված՝ 25.06.1974թ.
տղան՝ Պապիկյան Լևոն Լյուդվիգի, ծնված՝ 06.01.1990թ.
տղան՝ Պապիկյան Արթուր Լյուդվիգի, ծնված՝ 14.09.1970թ.
հարսը՝ Մկրտչյան Վարդուհի Թևանի, ծնված՝ 24.09.1976թ.
թոռը՝ Պապիկյան Արտյոմ Արթուրի, ծնված 16.08.1995թ.
թոռը՝ Պապիկյան Դավիթ Արթուրի, ծնված 27.05.1998թ.

2. Հանձնարարել.

ա) Ախուրյանի համայնքապետարանի ֆինասական բաժնին, նվիրատվությունից հետո նշված բնակարանը դուրս գրել հավեկշռից:

բ) սեփականատիրոջը՝ համապատասխան փաստաթղթեր ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանում գրանցում կատարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

« 21» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան